Արձանագրություն N 3

ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-2023/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդովՀայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար ուղևորափոխադրման մասնագիտացված ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 08 դեկտեմբերի 2023թ.
ժամը 11:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Արթուր Մանուկյանը անդամներ՝ Գագիկ Երեղյանը, Վարդ Խաչատրյանը և քարտուղար՝ Սպարտակ Հարությունյանը:

Օրակարգ
ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-2023/2 ծածկագրով գնման ընթացակարգի հատերի գնահատման և ամփոփման մասին

ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-2023/2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Արթուր Մանուկյանը նիստը հայտարարեց բացված և ներկայացրեց, որ հարկային մարմին կատարված հարցման պատասխանի համաձայն Վագտրանս ՍՊԸ-ն 18.01.2023թ-ին հարկային մարմին է ներկայացրել հայտարարություն շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ, որի հիման վրա 22.11.2023թ-ի դրությամբ համարվում է շրջանառության հարկ վճարող: ՀՀ ֆինանսների նախարարություն ուղարկված գրությանը ստացվել է պատասխան, որ ուսումնասիրելով հիշյալ գրությունը՝ հայտնում ենք, որ դրանով բարձրացված հարցադրման հետ կապված հարաբերությունները կարգավորված են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ:

Մասնավորապես ՀՀ կառավարության 04/05/2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի.

- 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով ՀՀ պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը,
- 14-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերը գնահատելու լիազորությունները պատկանում է գնահատող հանձնաժողովին,
- 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան:

ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման 10-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջով էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման ժամանակ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտն անբավարար գնահատվելու դեպքում գնման ընթացակարգը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

Հայտնում ենք նաև, որ եթե մասնակիցը տվյալ գործարքի մասով գնային առաջարկը ներկայացրել է որպես ավելացված արժեքի հարկ վճարող, ապա գտնում ենք, որ շրջանառության հարկ վճարող համարվելու դեպքում այդ գործարքը (պայմանագիրը) կարող է կատարել, եթե կամավորության սկզբունքով ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացնի ու դառնա ԱԱՀ վճարող:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվեց ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից Վագտրանս ՍՊԸ-ի, 2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ԷԼԻՏԲԱՍ ՍՊԸ-ի և 3-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած

մասնակից ԲՈՒՍ ՎՈՅԱԺ ՍՊԸ-ի կողմից հայտերով ներկայացված փաստաթղթերը և պարզեց, որ դրանք համապատասխանում են հրավերի պահանջներին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց.

-1-ին չափաբաժնի մասով առաջին տեղը զբաղեցրած մասնակից Վագտրանս ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար և վերջինս հայտարարել ընտրված մասնակից 1-ին չափաբաժնի մասով:

-2-րդ չափաբաժնի մասով առաջին տեղը զբաղեցրած մասնակից ԷԼԻՏԲԱՍ ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար և վերջինս հայտարարել ընտրված մասնակից 3-րդ չափաբաժնի մասով:

-3-րդ չափաբաժնի մասով առաջին տեղը զբաղեցրած մասնակից ԲՈՒՍ ՎՈՅԱԺ ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար և վերջինս հայտարարել ընտրված մասնակից 3-րդ չափաբաժնի մասով:

- սույն ընթացակարգով նախատեսված է անգործության ժամկետ, դրա ավարտից հետո Վագտրանս, ԷԼԻՏԲԱՍ և ԲՈՒՍ ՎՈՅԱԺ ՍՊԸ-ներին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ՝ առաջարկելով ներկայացնելու որակավորման և պայմանագրերի ապահովումները՝ հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ _____ Արթուր Մանուկյան

անդամներ _____ Գագիկ Երեղյան

_____ Վարդ Խաչատրյան

քարտուղար _____ Սպարտակ Հարությունյան